ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «11» դեկտեմբերի 2019թ.

2019թ-ի դեկտեմբերի 3-11-ին ժամը 14:00-ին ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Հ. Զաքոյան	ՀԱԱՀ հիմնադրամի տնտեսական գծով պռոռեկտոր,
Ս. Մարգարյան	ՀԱԱՀ հիմնադրամի տնտեսական վարչության պետ,
Ա. Ստեփանյան	ՀԱԱՀ հիմնադրամի տնտեսական վարչության պետի տեղակալ, գլխավոր ինժեներ,
Ռ. Մանասյան	ՀԱԱՀ հիմնադրամի մատակարարման բաժնի առաջատար մասնագետ,
Ա. Ներսիսյան	ՀԱԱՀ հիմնադրամի բանվորական աշխատանքների համակարգող,
Ե. Հարությունյան	ՀԱԱՀ հիմնադրամի գնումների բաժնի մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Զաքոյանը, իսկ քարտուղարն էր՝ Ե. Հարությունյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1.ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղարը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

11-րդ, 12-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 28-րդ, 29-րդ, 40-րդ, 41-րդ չափաբաժինների մասով **Սամվել Գևորգյան Պարգևի Ա/Ձ-ի** կողմից և **25-րդ, 26-րդ** չափաբաժինների մասով **«Էկոմիքս» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով:
2. Քարտուղարին՝ ծանուցել մասնակիցներին՝ սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացվելով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. **«Էկոմիքս» ՍՊԸ-ի** կողմից սահմանված կարգով ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:
2. **Սամվել Գևորգյան Պարգևի Ա/Ձ-ի** կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պահանջվող փաստաթղթերը:

Որոշվեց՝

1. Ե. Հարությունյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով:
3. Քարտուղարին՝ ծանուցել **11-րդ, 12-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ, 28-րդ, 29-րդ, 40-րդ, 41-րդ** չափաբաժինների մասով **«Էկոմիքս» ՍՊԸ-ին** գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

Հաշվի առնելով, որ 11-րդ, 12-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ, 28-րդ, 29-րդ, 40-րդ, 41-րդ չափաբաժինների մասով բավարար գնահատված «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ծածկագրով գնման ընթացակարգի տվյալ չափաբաժիններով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ

ենթակետի. (ֆին. Միջոցները գերազանցող գներ/բանակցություններ)՝ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին նոր նվազեցված գնային առաջարկներ չեն ներկայացվել և մասնակցի կողմից ներկայացված գները մնացին անփոփոխ, որոնք գերազանցում են գնման հայտով սահմանված գները:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ծածկագրով գնման ընթացակարգի **25-րդ, 26-րդ** չափաբաժինների մասով «**Էկոմիքս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Քարտուղարի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.
   1) «**Էկոմիքս» ՍՊԸ՝** բավարար,
3. Ընթացակարգը 11-րդ, 12-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ, 28-րդ, 29-րդ, 40-րդ, 41-րդ չափաբաժինների մասով մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/66 ծածկագրով գնման ընթացակարգի՝ 25-րդ, 26-րդ չափաբաժինների մասով «Էկոմիքս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Զաքոյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Մարգարյան

Ա. Ստեփանյան

Ռ. Մանասյան

Ա. Ներսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ե. Հարությունյան